Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գավառներում 12 կ. 1909, Շաբաթ, Սեպտեմբերի 12-ին. Թիֆլիս. №37.

## ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ




—Բարի աջողում, Սգօ աղբէր. է, ես չէյ-չալակ հազրեր եմ, կերթամ մամլաքեաթ, մըր սիրուն վաթան, դուն լէ հազրւէ երթանք, մըր արտ ու արօտին, մըր օճախ-պուճախին, մըր օղլուշաղին տէր ըլնենք։

—Խենթցե՞ր եմ ի՞նչ է, Սըքօ ջան, յա՞րի. էս ռուսի կնիկ պակաս օղլուշաղ է. էստեղ դվօրնիկ եմ, պակաս զուլլուղ է։

—Չէ՞ որ վաթանում կնիկ ունես, ձըմ կթօրկես էնի, թուրքէ՞ն, քրթէ՞ն. ամօթ՛ քզի, ամօթ.



Բարիտոն Բէգլար Ամիրջանի և ջութակահար Դաւթեանի արտիստական տուրնէն



ԿՐԹՒԱԾ ԽՈՒԶԱՐԿՈՒ ՇՈՒՆԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՕՐՔԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
1909 թ.

Տարի 4 ԽԱԹԱԲԱԼԱ 4 Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարելու, քննադատելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդուեալ ընթերցողները
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ ԵՆ
ամէն տեսակ պատուհասներից և խայտառակութիւններից

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայեա փ. № 19

Յայտարարութիւններ ամէն լեզուներով և խիստ մատչելի գներով։
Մահացուցակները մուքթա։
Մեր ընթերցողներին ման ենք ածում սեփական տէրօպլաններով։
Բազմաչխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրօպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկում ենք ձրի։

Խմբագրին կարող է տեսնել ով որ աչք ունի և քոռ չէ՝ տանը բնած ժամանակ, խմբագրատանը անժամանակ և փողոցներում բոլոր ժամանակ։ Առանձին ընդունելութիւններ չի ունենում, իսկ գաղտնի խորհուրդներից խուսափում է։ Նիւթեր, յօդուածներ. ոտանաւորներ, յայտարարութիւններ և այլն մենք էլ ենք ընդունում, փոստն էլ, միայն ճանապարհածախսը ձերն է, առանց մարկայի նամակներ „սկզբունքով“ չենք ընդունում։ Յօդուածների համար վճարում ենք, եթէ արժան ենք համարում. իսկ անարժանների համար փող էլ որ տան, չենք տպել։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը 5 ր. |
| Կէս տարուանը . . . . | 2 ր. . . . | 3 ր. |
| Երեք ամսուանը . . . | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը . . . . . . . . . . . | 50 կ. | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala“.
Խմբ. հրատարակող՝ ԱԻՑ.ՉԵՐԻՑԵԱՆ

**Սեպտեմբերի 1-ից մինչև տարւայ վերջը Խաթաբալան արժէ 2 ռուբլի։**



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

Ծայրագոյն Պատրիարք Նախամեծար Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի եւ Ընդհանրական Կաթողիկոս Ամենայն Հայոց

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

(Օծման առթիւ)

## ՊՈԼԻՏԻԿՈՒՐԻ ԱՇԽԱՐՔԸ

ԷՍ ՍՀԱԹԻՍ

Գիդի՞ք խանդխախան ընչիր է ըլում լուսնի տակին ու իրգրի էրեսին։

Հիմի ինչ կայ աշխրքիս վրէն, վուր դուք չգիդենաք. ցօցիալութինը խօ գիդիք ու համ էլ տեհաք, խուլիգնեբուն էլ ճանչնում իք. չունքի միր էս սահաթւայ «վկուսով», վունց վուր ունիրն էն ասում, խուլիգնութինը ուփրօ միզ մօղ տիղ ունէ, քանց թէ օրինաւուրութինը։

Օսմանլի կօնցլիտուցիէն ու սուլթանին թախտէմէն դիւիր գցիլը, ձիր սակութար աչկեբով տեհաք։ Ղզլբաշի թաքաւուրի, շահի տուտուցութինը ու իշի վրայ նստիլն էլ արժանացաք. Սաթարի ու Էփրեմի գովքն էլ խօ իմացաք. հիմի ձիզ ինչ է պակաս. թամամ պօլիտիկուրի մարթիք իք։

Համա չէ, դուք ջէր խիստ եանղլիշ իք, չունքի ինչղդամ էլ պօլիտիկուրի խիլք ունենաք, ջէր էլի պակաս կուլիք ու կշիռքումը էնենց չիք կշուի, վուր գլուխն ու վուտնիրը բարեբար դուս գան։

Մենակ խօ ընդախտուրնիրը չին, վուր վերի էտաժը քրիհով տան, մենակ Սեպեհդարնիր, Սուլթան—Ասադնիր, Էփրեմնիր ու Մամէդ Ալի շահիրը չին, վուր խիլքը քամուն տան.—խանդխախան խալխը, միլիօնաւուր խալխն էլ, խիլքը կօրցնում է, միտկը շփոթւում, կօսխ պիանից Վիկտօրը ըլի։

Պօլիտիկուրի բաներու մէջն էլ էսենց բանիր շատ կան։

Ղզլբաշի աշխրքումը ասում են մինչկի տաս միլիօն խալխ կայ, էս տաս միլիօն խալխն էլ մէ մէ դամ էնենց է տուտուցանում, իրան իրան ու մէբաշ, վունց վուր, ումը դուզիք ասիմ ձիր ճանանչնիրեմէն։

Պօլիտիկէն էս թաւուր խասիաթ էլ ունէ։

Մա՞շ։

Ա՛յ, խուսկի գելիշ՝ ինչ արաւ Ղըզլբաշի խալխը. տարիներով կուեցին, էնդդամ արին թափեցին, էնդդամ տուն ու տիղ, քաղաք ու գիղ էրեցին, ախպէրը ախպուր դիմ, հէրը վուրթուհիդ թշնամացրին, կոտորեցին, թէ ինչ է, «ազատութին» ու «կօնցլիտուցիա» դուզինք, կօսէ, խեյօք թաքաւուր՝ շահ

ղիտլինը ջոգի, կօսէ. ու վերջը ինչ ալին. հօրը՝ քառասուն տարեկան մարթուն թախտամէն վեր գցեցին, տասը տարեկան տղին՝ Թաքաւուր նստեցրին, արամէն էլ մինձ պօլիտիկուրի տուտուցութին. պաս ուտիմ, պաս ուտիմ ու էն էլ թանէ սպաս ուտիմ. էստի գըլըրաշնիրը հայիրեմէն խելօք չին էլի։

Սեվ սեվ ամբիրը էկել է ու կաղնել է հիմի էլ բերձեննիրու թաքաւուրական տան գլխին։

Թաքաւուրնիր փոխելը հիմի մօդայ նըստաւ բերձեննիրը ինչ ին ուզում. մէ ինչ վուր աշխրքի կտուր, վուր Կրէտէ ին տաում, «էն թող թուրքիրը, Օսմանցիքը միզ տան», կօսէ։ Օսմանցիքն էլ դաւի ին ման գալի, մուստաւ պրիստաւ ու գարադօվի հանդը. թողէք, կօսէ, մէ դրանց քինթ ու պռունգը ջարթիմ, կօսէ։

Համա էւրօպիէն չէ թողնում, ու էստու համա էլ բերձեննիրը խիստ բեդամաղ ին ըլում իրենց թաքաւուրեմէն, վուր էնդդամ շնուրք չունէ, օխտանասուն տարեկան հասագում, վուր համ թուրքիրուն ջրիցը մուշտի չանց տալով փախցնի, համ էլ՝ էւրօպացիներու ձիռքիրում, կրակեմէն բաղիրուղի հանի։

Փարանննիրու աշխարք՝ Էգիպտոսն էլ է խռովում ու կօկօռղիյուսի հանդի միթում լաց է ըլում, վուր ինգլիզնիրը էս քսան ու օխտը տարում իրենց տիրում ին ու էլի չին դուս գնում։

Մարթս պիտի էրկու վուրանանի հաւըլի, վուր գժի տօլ էլա խիլք ու բանականութին չունենայ։ Միր աւկային գուրձիրի գուրձիչնիրից վուր մէկն է իրան կամքով դուս գնում, վուր Ինգլիզը կարք ու կանոն գցելուց եդով դուս գնայ։

Հնդուստանն էլ աաում ին, բունտիր պիտի ըլի, կօսէ. դուրթ է, էստու համա Էվրեմէրդու գրքումը ջէր բան չէ գրած. համա հուտիցը իմացւում է, վուր շան գլուխը, մէնակ Ախալցխում չէ թաղած։

Ճուշու թեմական շկօլի վից կլասն էլ հիմի փիքը ին անրի, վուր բաց անին ու մէկէլ տարու համա կի՝ Աստուձ գիդէ, թէ ինչ կուլի։

Փրանգստանում Կլէմանսօն, էն Կլէմանսօն, վուր առաք ցօցիալ էր ու վիրչն էլ մինիստր դառաւ, գուրձը թողիլ է, հիմի գուգէ, կօսէ, վուր փոնչութին անի։

Սաղաթէլով Օհանէսն էլ, Աստուձ բարաքաթ տայ դրանց մեռելնիրուն, գնացիլ է Էչմիաձնի կուռը, Խալփալու գլոզը, խիստ մինձ դուժիտի համա։

Ու միր վայենի մինիստր Սուխօտլինն էլ գուգէ վեր, հիմի այերի (օդի) մէջ ման գալու մէ էնենց շարիր մօգոնէ, վուր խուսկի գէլիշ, բանի ժուգը վուր բան ըլի, մինք էլ անբան մնալու չլինք։

Համա մինիստր Սուխօտլինը խիստ եանղլիշ է, էստի եախտ ու մախտ կլուբնիր ինչ կօնինք, նուր նուր շաբիր մօգոնիլ ինչ կօնինք. իփ վուր հիմի Ռուսէթում ապրողնիրու մինձ փայը, առանց էն էլ եախտի կլուբի չլէննիր ինք. դիփ վիր վիր, դիփ քամիք է, վուր բանցրացնում ինք։

Համա պօլիտիկուրի բանը մէնակ խօ էտ չէ, վուր ըլում է։

Բաս միր կնիազնիրը, վի գյաւե Ամիրաջիբլիներու, Ծերեթելիներու, Աբխազիներու ու Ճաւճավաձէներու պակաս պօլիտիկոսնիր ին։

Եապօննիրու հանդի սրանք կի դոշաղ չին. բաս թէ էտ էսենց չէ, բաս էս ինչ օյիննիր է, վուր Արծունովի բաղի նամարդի աննամուսութինը ջէր չմոռացած, ջէր պատիժը չքաշած. Թէլաւի խառօրիէն է աղարդ կաղնում, իփ մարիամօբի թըվի 22-ին, Հաւուց Բարեգուրձական ննգրութենի համա վեչէր ին սարքում ու գիշիր ժուգը լօթիքը վրայ ին ննգնում, ջարթում, փշրում, ծեծում, տրորում, գողնում, թէ ինչ է, էքսի օրն էլ ախպէրաապան արին վիթին։

Ա՛յ էսենց ձիզ մատաղ. էսենց, պօլէտիկի համա ինչիր չէ ըլում։

Դասաղար Կալաուզեանց

---

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԳՆԵՐ

Ինչո՞ւ տխուր, լալահառաչ
Դիտում ես ինձ, աղունիկ.
Իմ երազիս լացն ու հառաչ
Յուզե՞լ է քեզ լուռ, գաղտնիկ։

Անցած գիշեր երազ տեսայ—
Ես քեզ գրկած լացելիս.
Բայց դու ուրախ, ծաղրով դժնեայ
Քրքջացիր, նազելիս։

Այժմ տխուր ու վշտագին
Դիտում ես ինձ անդադրում.
Արդեօք ինչ ես—քոյրիկ թէ կին—
Այդ շատացիր երազում։

Եր.

---

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻՑ

Երկու երեք տարի առաջ, Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը մօտ 200,000 րուբլի փող ծախսեց, որպէսզի իմանայ, թէ ո՞ր թաղում որչափ տուն կայ և որ տունը որպիսի արտաքնոց։

Երեք տարուց յետոյ տեղեկութիւն է տուացել միմիայն 2րդ և 3րդ քաղաքամասերի մասին, և այն էլ կցկտուր։

Այդ 200,000 րուբլին ծախսեց ինտելլիգենտների (?) ձեռքով երկու քաղաքամասերի արտաքնոցները հաշւելու համար, այժմըս ինչքան կը հարկաւորւի մեր քաղաքային վարչութեանը, որ այնչափ ուէր և ջանք է գործ դնում արտաքնոցային հաշիւներ անենալու համար, եթէ քաղաքային մնացեալ 10 քաղաքամասերի արտաքնոցների հաշիւներն էլ ցանկանայ իմանալ։

Մենք միայն կարող ենք ուրախանալ իշ. Զերբեզովի մունիցիպալիտիկական տաղանդի համար և ցանկալ, որ արտաքնոցային հարցը, որ այնչափ մեծ դեր է կատարում մեր կեանքի և առհասարակ քաղաքային ազգաբնակութեան համար, ապագայում էլ անուշադիր չը մնայ։

Մեր քաղաքային վարչութեան ղեկավարողներին դա աւելի կարեւոր է, քան պարտաղիր ուսման համար փող գտնելը։

—

Լրագիրներից իմանում ենք, որ քաղաքային վարչութիւնը փնտրում է հանգուցեալ Ա. Ս. Մատինեանի քաղաքագլուխ ընտրելու ժուռնալները (գործ 1875, 1880, 1885 և 1890 թւերի), և չէ գտնում։

Այդպէս էլ պէտք է լինէր, երբ քաղաքային վարչութեան մէջ ծառայողները աւելի ֆլիրտով են զբաղւած,-բոլոր յարմարութիւններով, քան թէ իսկական գործերով։

---

ՀԱՄՈՒՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԳԻՄՆԱԶԻԱՅՈՒՄ

Մաթեմատիկական առարկայ.

Ուսուցիչ.—Դուք համարել գիտէ՞ք։
Քննւող.—Ե՜ս... կարծեմ։
Ուսուցիչ.—Ուրեմն համարեցէք սկզբից։
Քննւող.—Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց...
Ուսուցիչ.—Խնդրեմ լռէք, դուք իսկի համարել էլ չգիտէք։
Քննւող.—Ի՞նչպէս թէ չգիտեմ, թոյլ տւէք որ շարունակեմ... եօթ, ութ...
Ուսուցիչ.—Ներողութիւն, դուք համարել իսկի չգիտէք. մէկից առաջ պէտք էր և «զ ր օ ն» յիշէիք, ուրեմն չէք կարող քննութիւնները շարունակել։ Կտրըւեցիք։



## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ



ՈՐ ԱՆՑԵԱԼ 1908 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԸՆՏՐԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՄԱՏԹԷՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

ԳԻՏՈՒՆ ՊԼԻՆՁ

Ինքը հայ է, համ էլ քրիստոնեայ, համ էլ գիտնական, համ էլ Դումի չլէն, համ էլ զանգին, համ էլ տեղստեղ սակի։ Աղբար, դրսանց սակի կերեւնայ, լաւ պլպլայ կը, վճիլ գիտէ, թէ ատ դահրսամարի ներսի թարաֆը, սայլ փթած էրկաթ է։ Աղ մարդը յառաջ աղքատ է էղեր, յաշկերտ վախթը իրեն դասընկերներից թամասուկով փարայ է առեր, վարժատուն է մտեր, թագմինը առեր է, մարդու սրայ խաունեբ է, եղատ գործ է գտեր, հիմի հաղարների հետ խաղայ կը։ Հիմի մուր կուտին, լեղի կուտին, ատ թամասուկով առած փարան չին կըռնայ յետ առնի։ Դէ հիմի ըսէք տեսնեմ, ատիկ մարդավարութեան է։ Ջանըմ, փարայ ես առեր, տուր տիրոջը. չես առեր. ջուղաբ տուր, թէ տալիք չեմ։ Ախր ամօթ է, գաղէթներուն մէջ սաղ աշխարքը չուե էրին, թէ Դումի չլէնը 200 մանէթ է տալիք՝ չի տայ։ Զակոնչին էլ օր ատպէս բաներ կենէ կը. իրեն պարտքը կուրանայ կը, ալ մէկալներից ինչ յուզին։ Աստուած վկայ, շատ վախթ գիտնականները անպէս անկարգութեան կենեն կը, օր ինի խեղճ իրղատները կամչնան կը, չին էնի։ Դաղէթանի աղա, դուն զաղէթ կարթցող մարդ իս, ատ հարիֆին լաւ ճանչիս կը։ Իմ թարաֆէս շատ բարև էրէ, ըսէ ամօթ է, թող իրեն պարտքը տայ, թամասուկը պատռէ, թէ չէ, շատի թուղթ փնտռող տուտակատներ շատ կան, ցկիմ կը անոնց ձեռը, անքան զզին կը, օր բուրթը բարերար հանին կը։

Դալայչի Մազզար

## ՄՏԵՐԻՄ ԸՆԿԵՐ

Երբ որ նիրհում են սարերը դժգոյն,
Խաւար լուսինը սև ամպով պատած,
Նայում է դէմքիդ, տխուր գունատուած՝
Դա իմ թախիծն է,
Հասկացիր ընկեր։
Երբ մութ գիշերին քաղցր բուրմունքով
Զով զեփիւռ բուրէ մեղմիկ շշուկով,
Դա էլ իմ չքնաղ բորբոք յոյսերի
Լուռ մրմունջներն են.
Լաւ լսիր ընկեր։
Իսկ երբ տարերքի ահեղ վայրկեանին
Լսւում է որոտ, զոռոց թնդագին՝
Դա իմ վշտերի, ցասկոտ, գուժաբեր
Երգի ձայներն են.
Իմ անգին ընկեր։

Սուսան

## ԼՕԲԻ!

Տակաւին մոռացած չենք լինի այն ժամանակները, երբ լօբին լաւ լազաթին, ոչ միայն ուտում ու կշտանում էինք, այլև փառաւորապէս մարսում։

Եկան ժամանակներ, երբ լօբի ուտողները սաստիկ ցաւեր, սաստիկ հիւանդութիւններ զգացին, հենց որ իմացան, թէ պաս պահելը էլ մօդա չէ.

Եւ այնուհետև լօբին մոռացութեան տրուեց, ոչ ոք—կամ շատ քչերն էին ուտում և այն էլ փող չունեցողները, մինչև այն ժամանակ, երբ բոստանչիներն էլ տեսան, որ լօբին շուկայում գին չունի, անտեր առան, քիչ քանակութեամբ սկսեցին ցանել, այդ պատճառով էլ լօբու գինը փութը 30 կոպէկից 2 ր. 40 կոպէկի հասցրին։

Մեր բժիշկներն էլ մի գլուխ այն էին ասում, որ լօբին խիստ վնասակար է և եթէ հիւանդը լօբի էր ուզում և երբեմն էլ ուտում, բժիշկները հիւանդի դրութիւնը լօբուն էին վերագրում, և ոչ իրենց տգիտութեան։

Այժմ, գիտնական բժիշկները գտել են, հաստատել և յայտարարել, որ լօբին ամենաառողջարար, նիւթալից եւ հեշտ մարսական կերակուր է։

Բժիշկները պէտք է կարմրեն թէ ոչ, եթէ այդ բանը լսելով մեր բոստանչիները լօբու փութը 12 ռուբլի չհանեն։

Սխտոր

## ԹԱՐՍ ԱՌԵՒՏՈՒՐ

—Ուզում եմ մտնել այս խանութը և մի նոր վելօսիպեդ գնեմ

—Նժա, ինչ ես ասում, ես քեզ խորհուրդ չեմ տալ. մի քանի ամիս սրանից առաջ, ես էլ այստեղից մինը առայ, բայց վերջը շատ փոշմանեցի, որովհետև սրանց վելօսիպեդը հինգ-վեց օրից աւել չդիմացաւ։

—Ի՞նչ, միթէ կոտրուեց։

—Ոչ, ես տարայ լոմբարդ և այնտեղ գրաւ դրի։

Բ.

## ԲԺԻՇԿ Ե. . . . . . ՆԻ ՄՕՏ

—Պ. բժիշկ, պ. Պօղոսեանը խնդրում է ձեզ, իրեն այցելէք, որովհետև ձեր որոշած դեղերը գործածելով, չափազանց վատ է զգում իրեն։ Խնդրում եմ պ. բժիշկ, շուտ օգնութեան հասէք։

—Գնա, գնա, շուտ, վերև բարձրացիր, քաղաքային բժիշկը վերն է ապրում, նա ձրի է բժշկում. իսկ ես չեմ այցելում այնպիսի տեղեր՝ որտեղ վարձատրութիւն չկայ. վերջապէս բաւական է, մի քանի անգամ բժշկել եմ առանց կոպէկ ստանալու, շուտ, շուտ, վերև, վերև...

—Պ. բժիշկ, քաղաքային բժիշկը չքաւորների համար է. իսկ պ. Պօղոսեանը հարուստ անձնաւորութիւն է և միշտ առատ վարձատրում է բժշկին. դուք գիտէք, ես կը գնամ ուրիշ բժիշկ կը հրաւիրեմ. «ցտեսութիւն»։

—Սպասիր, սպասիր, դուք ինձ պ. Պօղոսեանի մօտ էք հրաւիրում։

—Այո։

—Ներեցէք, ես բոլորովին սխալ եմ հասկացել ձեզ։ Ես կարծում էի ինձ հրաւիրում էք պ. Ներսիսեանի մօտ, որին միքանի անգամ բժշկել եմ առանց վարձատրութիւն ստանալու, հենց այս րոպէիս էլ տէլէֆօնով ինձ հրաւիրեցին, բայց չգնացի. է՜հ. ինչ յիմար թիւրիմացութիւն է այս. պ. Պօղոսեանը իմ լաւ ծանօթներից է, սպասիր գնանք։

—Ես գնում եմ ուրիշ բժիշկ հրաւիրելու, «ցտեսութիւն»։

—Մի գնա, գալիս եմ։ է՜յ. աղախին, շո՛ւտ, շուտ, գլխարկս, տրճատս ինձ հասցրու. սպասիր, սպասիր գալիս եմ. գալիս

ეროვნული ბიბლიოთეკა

եմ… մի գրողը տանի Ներսիսեա…

—

—Պ. բժիշկ, խէր Աստուծոյ, ինձ բժշկիր։
—Ինչից էք նեղանում
—Ատամից։
—Է՜հ. ատամ իլ գլխիցս, ես էլ կարծեցի, թէ ներքին հիւանդութիւն ունէք, գնա, գնա, քո ատամից ինձ օգուտ չկայ։
—Բժիշկ ջան, գլխիդ ղուրբան, 'ինչ ուզում ես տամ, թաքլան ինձ մի ճար։
—Է՛հ, ատամ իլ գլխիցս, ես ատամնաբոյժ չեմ։
—Բա ինձ ասեցին, թէ լաւ բժիշկ էք։
—Այո, լաւ եմ ներքին հիւանդութիւնների համար։
—Է՛հ, պ. բժիշկ, քո լաւութիւնը հասկացանք, որ ատամի ցաւինճար էլ չես գիդում, էլ ճեր մնաց ներքին հիւանդութեան։ Ինչպէս երևում է բէբիարա բժիշկներից ես։

Լ. ՄԱԿ.

—Պարոն, չէ՞ որ դուք «Արբեցողութեան դէմ մաքառող ընկերութեան» անդամ էք. բայց ինքներդ օղի էք խմում։
—Այո. միայն ես տկարութեանս պատճառով եմ գործածում։
—Ի՞նչ է ձեր տկարութիւնը։
—Ճշմարիտն ասած՝ ես ինքս էլ չգիտեմ, ամեն առաւօտ գլուխս ճաքում է։

Լիլ.



ՕՐ. ԻԶԱԲԵԼԼԱ ՔԱԼԱՆԹԱՐ
Տաղանդաւոր դերասանուհի

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—Ի՞նչ ես կարդում։
—Կնոջս նամակը։
—Իսկ ինչ է գրում նա։
—Դեռ ես յետ գրութեանը չեմ կարդացել, եթէ նա բան ունի ասելու յետգրութեան մէջ է գրում։

ՍԻՐԱԲԱՆԱԿԱՆ

ՕՐ. ԱՆԲԱԽՏՅԱՆԻՆ
(Նմանութիւն)

Երբ քեզ մի օր հարցրեցի,
Տարիքդ՝ քա՞նի է, օրիորդ,
Համեստօրէն ասացիր,
Որ տարիքդ է՝ տասնեւեօթ։

Ընկերուհուդ երբ հարցրի
Դարձեալ տարիքիդ մասին,
Ասաց, որ ճիշտ քսան տարի
Մենք շրջում ենք միասին։

Բայց երբ մի օր եկեղեցու
Տօմարն աչքով անցուցի,
Քառասնեօ՜թ էր քո տարիքդ,
Եւ ես ափշած մնացի։

Փիստոն Ճլթեանց

ԼԻԼԻՊՈՒՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Տ ի կ ի ն ը.—Ես, օրիորդ, ձեզ ընդունում եմ, որպէս մանկապահ մեր տան մէջ. ուստի և աւելորդ չեմ համարում նախազգուշացնել, որ ձեր կողմից մի ոչև է զաղանի առաջարկութիւն ամուսնուս՝ կարող է թիւրիմացութիւնների պատճառ դառնալ…
Օ ր ի ո ր դ ը.—Ողորմած եղէք, տիկին, ինչե՞ր էք խօսում… Ես մեծայայս եմ, թէ ձեր ա-

# ՖԵԼԻԷՏՕՆ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԻՍՏԸ
## ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

### Առաջին տեսարան

Ուսումնական տարւայ սկզբին. խնճոյք տեսչի (կամ աւագ ուսուցչի) մօտ. ճոխ սեղան. բազմաթիւ շշեր. երաժշտութիւն. ուրախ բացականչութիւններ…

Տեսուչը, ոգևորւած, բաժակն առնելով, դիմում է ուսուցիչներին.—«Ընկերներ! Ես կառաջարկեմ մի կենաց, մի թանկագին, մի ռսկեայ, մի ադամանդեայ կենաց, որը մեր սրտին, մեր հոգւոյն, մարմնին, այնքան մօտ է, այնքան ցանկալի. ես կխմեմ մեր համերաշխութեան, և սիրոյ կենացը, սիրոյ որը բերել է մեզ միևնոյն գործնէութեան ասպարէզ, մի վեհ, մի սուրբ ասպարէզ. սիրայ, որը կապում է մեզ բոլորիս մեր սիրելի դպրոցի հետ։ Թող մեր գործնէութեան ղեկավարները լինեն համերաշխութիւնը և սէրը. թող մեր իւրաքանչիւր քայլը տոգորւած լինի սիրով, և թող սէրը միացնի մեզ մի մարդու պէս և տանի դէպի գործ. դէպի յառաջդիմութիւն… Մեզ ոգևորողը, մեզ այրող սրբազան կրակը սէրն է, մեր զգացմունքներին տիրապետողը դարձեալ սէրն է. խմենք ուրեմն սիրոյ և համերաշխութեան կենացը և ընկերական համբոյրներով յաւերժացնենք մեր սրտում տիրող սէրը։

Ուսուցիչները.—Կեցցէ՜ սէրը և համերաշխութիւնը. բրաւօ, ամէն. սիրոյ եւ համերաշխութեան կենացը!

Ուսուցիչ Փիլիպպոսեանը.—Թոյլ տւէք աւելացնել մի քանի խօսք. ընկերներ, ես ոչ միայն կարծում եմ, օ ոչ, ես պնդում եմ, որ մեր միջից վերացած են կուսակցական, սօցիալական, տնտեսական և այլ խտրութիւնները և մենք բոլորս կազմում ենք մի ներդաշնակ համատեղութիւն, որի անունը գիտէք թէ ինչ է

Բոլորը.—Սէր, սէր, կեցցէ սէրը և համերաշխութիւնը. խմենք սիրոյ կենացը. համբուրւէք. (բոլորը համբուրւում են և «եղբայրութեան» (բրուդերշաֆթ) խմում)։

Տուշ, տո՛ւշ. (երաժշտութիւնը նւագում է. բաժակների չխչխկոցը ուժեղանում է)

Տեսուչը (երաժշտութիւնը լռելուց յետոյ)
Մի երգ, մի լաւ երգ…

Բոլորը (սկսում են երգել)
«Տուր ինձ քո ձեռքն, եղբայր եմք մեք
Որ մրրկաւ էինք զատւած.
. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն»։

### Երկրորդ տեսարան

Տարւայ վերջը. գիշերւայ ժամի 1-ը. մանկավարժական ժողով. ուսուցիչները գզգւած, կատաղի աչքերով. տեսչի մազերը խառնիխուռն, կնճիռները ճակտին. ուսուցչական խումբը երկու կուսակցութեան բաժանւած—տեսչական և Փիլիպոսեան

Ուսուցիչ Մարկոսեանը (դիմելով տեսչին).—Ձեր ինտրիգները, ձեր ստնձգութիւնները մեր դէմ, ձեր գաղտնի այցելութիւնները հոգաբարձութեան… մեզ լաւ յայտնի են. և մենք կպատռենք ձեր սեւ դիմակը և ձեր արարքները նշաւակութեան սիւնին կմեխենք ձեզ հետ։

Տեսուչը (վեր թռչելով տեղից).—Դուք ստում էք, դուք զրպարտում էք, ես պատիւ եմ պահանջում… Ձեզ պէս մութ խորշերում գործող լրտեսներին, ես կարող եմ միայն արհամարհել…

Մարկոսեանը (տեսչին).—Դուք համարձակւում էք. ձեր ստոր վարմունքը…

Կիրակոսեանը (Մարկոսեանին).—Դուք կատարեալ սրիկայ էք.

Փիլիպոսեանը.-(Տեսչին) Մենք ցոյց կըտանք ձեր սասզակային խմբին. ձեր սեւ խուլիգանական ընկերներին…

(Թառնւում են իրար. լսւում են շառաչիւնակ. սրիկաներ, ստորութիւն, լրբութիւն և այլ բառեր. սկզբում լսւում է զանգի ձայնը, բայց յետոյ լռում է. յարձակւում են իրար վրայ և մազերից ուզում են քաշքշել և ծառաները գալիս, անջատում են)…

(Վարագոյր)

Դիոնիս

մուսինն այնքան բարի կլինի, որ թոյլ չի տալ ինձ իրանից առաջ ընկնեմ։

—

Տ ի կ ի ն ը (խոհարարուհուն).—Մարիամ, ստացիր քո հաշիւը և հեռացիր,—դու ամուսնուս հաճելի չես։

Խ ո հ.—Տիրուհի, ես պատրաստ եմ ձեր ամուսնուն հաճոյանալու. միայն երկիւղ ունեմ, որ այնժամանակ հաշիւ ստանալու հերթը ձեզ կը հասնի։

—

Ի ր ա ւ ա բ ա ն (Հակառակ կողմի վկային.)—Դուք, բարեկամ, չափազանց ճշմարտախօս և ազնիւ մարդ էք երևում։

Վ կ ա յ.—Պարոն փաստաբան, դրա նման մի հաճոյախօսութիւն էլ, ես կուզէի ձեզ համար ասել, սակայն չեմ կարող, քանի որ երդւած եմ ճշմարիտը խօսել։

Լիլիպուտի



—Պարոն Կարապետ, իմացա՞ր, վուր էշմիաձնի Մամբրէ վարթապետը փարաջէն հանել է, հիմի ամեն օր բուլվարի վրէն ժամ է գալի, էնենց անարուռ, կօսես էրեսին միռոն չըլի քսած։

—Ղուրթ ես հրամանք անում։

—Քու արիւը, քու արիւը սուտ չգիդենաս, իմ հօրեն վկայ։

—Է՛, իժում ինչի համա։

—Աստուձ վուչ գիդի նրա գլուխն ու արիւը, ասում է, կնիկ իմ ուզում, կօսէ։

—Վա՜, գանա կնգա համա մարթս էսենց բեսար նամաղուլ կօնէ՞։

—Է՛, հիմի ընչիր չէ ըլում։ վուր էսուէնք չկի։

—

—Ա՛յ տղայ, ինչի ես դու յիմար-յիմար դուս տալի։

—Իսկի էլ էդպէս չէ։

—Ինչպէս թէ չէ. յիմարութիւն չէ՞, որ համ ամէնքին հայհոյում ես, համ էլ մարդու չես հաւանում։

—Բաս ինչ անեմ, երբ բան չէի ասում, ասում էին ագէտ է, սկսեցի խօսել—ասացիք թէ պահպանողական ու կղերական ես, կարգ պահանջեցի, ասացիք թէ խուլիգան ես, հիմայ որ մեծ մեծ եմ խօսում, ասում էք թէ յիմար եմ դուս տալի, իսկ ես ուզում էի ճախ խօսել։

—

—Ձեր կարծիքները յիշեցնում են ինձ յիմարի ատամները։

—Բայց ես կրկնում եմ միայն ձեր ատամները։

Ծիծակ

# ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Սեպհական Ռուսական եւ Քաւու գործակալութեանց հեռագրներ։)

## ԳԱՍՊԱՐ ԿԱԼԱՏՈՒԶԵԱՆԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ։

Թիֆլիզ ճաշ 2 ժ–15 ր.

Արդէն երեկ առաւօտից շատ վաղ, քաղաքումս կենդանութիւն էր տիրում. խանութները բաց էին, փոները վառած. առաւօտեան ժամասացութեան առթիւ՝ Թիֆլիզի բազմաթիւ և բազմակրօն եկեղեցիներում զանգակները ղօղանջում էին. պետական, թէ մասնաւոր հիմնարկութիւնների ծառայողները, դեռ ժամը 9 ը չհրացած՝ շտապում էին պաշտօնատեղերը, իսկ դըպրոցական հաստատութիւններում աշակերտ, աշակերտուհի և վարժապետ-վարժուհի՝ արդէն 8 ինատեղերն էին։

Օրը օրի տեսք ունէր և եարմունկայում ու շուկաներում, մթերքի համար դուրս էին գնացել վաղ առաւօտեան քմահաճ տիկինները, լու խուզող խազէինները և մթերքից ծլկացնող խոհարար-խոհարարուհիները։

Երաժշտական դպրոցում մուզիկը նւագում էր ըստ հարկի. իսկ փողոցներում գարմոն և արգան ածողները արդէն կպել էին իրանց գործին։ Օրթաճալայից եւՎերայի այգիներից լըսւում էր զուռնայի զիլ ձայնը։

Էլեկտրական տրամւայը սարսափելի արագ վազվզում էր քաղաքի փողոցների մէջ տեղերով. սրանցից յետ չէին մնում և ֆայտօնները, պաւօզկաներն ու սայլերը, իսկ Հավլաբարումն էլ օմնիբուսներն ու աւտօմօբիլները։ Սինեմատօգրաֆներում պատրաստւում էին ցոյց տալ Ցեպպելինի օդաչու նաւը։

Ժամը ուղիղ $3^1/_2$ ին Գասպար Կալատուզեանը բարեհաճեց երեսը խաչակնքել, երբ սեղանից վեր կացաւ՝ իր տան անդամները նոյնպէս տեղերից շարժւեցին։ Հրամայւած էր դւօրնիկին ճամբրակը, բարձն ու պլէդը տանել տրամւայի վագոնը։—Հենց որ Գասպար Կալատուզեանի տան դուռը բացւեց, երևաց իր քաչալ գլուխը. դուրս գալուն պէս՝ փողոցում խորին լռութիւն տիրեց, որովհետև մարդ չէր երևում։

Այս տեղ Գասպար Կալատուզեանը մի մեծ քաղաքական ճառ խօսեց, Համբարձում Առաքելեանի Կաթողիկոսին տարած դիրեկտիւների առթիւ։

Ապա Կալատուզեանն ուխտայով հօֆմարշալ Միխօները, ադիւտանդ Ալտակունին, գեներալ-չինգիխան Պօլէտիկաը, խակական զաղանի խորհրդաբան Բիօ-Գրաֆը, ներքին գործոց խորհրդատու Ծիծակը, խորհուրդ դըժող Ես-Եմը, մեծամիտներ՝ Բամբակը, Սխաըը. Դիօնիան ու Պիղատոսը, կարդինալներ՝ Բօյ-կոտը՝ Մեֆիստոֆէլն ու Սադայէլը. ադմիրալ Արմենակը, գինեպաշտ Բախչօն ու Լաշքեարը, տնտեսէր Գիգան ու Մարտիրոս IIը, ցրւիչ Օհաննէսը, մականւանեալն Աճէմեան, որից բաժանորդները շարունակ գանգատւում են, թերթը ժամանակին չհասցնելու համար և գաղէթչիկ Գէորգ Սաֆարեանը իր պօրտֆելով։ Այդ տեղ էին և «Խաթաբալայի» բոլոր նկարիչները, որոնք 18 վագոն ներկ ու վրձիններով, ձէթ ու մրով, կաւիճով ու ածուխով պատրաստւած՝ անցան տան փողոցից և հենց որ տրամւայում բաց տեղեր տեսան, իսկոյնեւեթ նստեցին ու դէպի վագզալ ճանապարհւեցին։

Ճանապարհին ծանօթները բարևում էին։

Վագոնումն էլ մի տաք տաք ճառ արտասանեց։ Հանդիսաւոր գնացքը հասաւ կայարան. այստեղ հաւաքւած էին, բազմաթիւ դրօգապաններ, պաւօսկաչիներ, նասիլշիկներ, ժանդարմներ և կօնդուկտօրներ. այլև Ալէքսանդրապօլ, Կարս, Էջմիածին, Երևան, Ջուլֆա և Պարսկաստան գնացող պասսաժիր-ճամբորդներ։

Այս տեղ պարոն Կալատուզեանին

իր վերջին զեկուցումը դռնապանը, որից յետոյ ագա Գասպարը իր ոտով գնաց կասսի առաջ ու իր ձեռքով տոմսակ գնեց և մեծամեծ դահլիճների միջով անցնելով դուրս եկաւ իսկական պլատֆորմ (ոչ քաղաքական.) և ուղղակի մտաւ կեղտոտ վագոնը։ Վագոնի լուսամուտից, կարճ ճառով բացատրեց կայարանի պլատֆորմայի և քաղաքական պլատֆորմայի ունեցած անալօգիական նմանութիւնները։ Լսեց ճեպընթաց գնացքի սուլոցը, որ քիչ մնաց խանգարէր ճառի վերջին կտորը և գնացքը սլաց դէպի ս. Էջմիածին։

*Նաւթլուղ, Հեռախօսով*

Առօք փառօք անցաւ Գասպար Կալատուզովը։ Քաղաքական նպատակների հետ ոչ ոք չկարողացաւ ծանօթանալ։

*Ջանղար. 7 ժ. 22 ր.*

Գասպար Կալատուզեանի գլուխն երևաց վագոնի լուսամուտից։

*Ախթալա. 8 ժ. 37 ր.*

Գասպար ագա Կալատուզեանին տանող գնացքը չկարողացաւ երկար մնալ կայարանում։ Սպասող հասարակութիւնը զրկւեց ճառից։

*Սանահին. 9 ժ. 45 ր.*

Կալատուզեանը վագոնում խորմփում էր։

*Ղարաքլիսա. 11 ժ. 8 ր.*

Գնացքը հասնելու պէս, Ալեքսանդրապօլի և շրջակայ գիւղերի պատգամաւորները կարգով շարւեցին պլատֆորմի վերայ. որոնց առաջից ցերեմօնիայով անցաւ Գասպար Կալատուզեանը. ամպհովանու տակ (անձրևում չէր) ընդունեց տեղական և շրջանի ուսուցիչներին, որոնք խնդրում էին Կալատուզեանին գործնականապէս ցոյց տալ գիւղատնտեսականից և խօսել տնայնագործութեան մասին մի բան։

Ուսուցիչները յայտնեցին, որ սովորական դասախօսութիւնների այս մի քանի օրւայ դադարումը այն աստիճան զգալի է իրանց, որ այլևս առանց դասախօսութիւնների չեն կարող մնալ. եթէ դասախօսութիւնները դադարեն, իրանք կը հրաժարւեն ստանձնած պաշտօնից։

Կալատուզեանը խոստացաւ վերադարձին դասախօսել «դօշի եւ զուրգիեշի» մասին։ Ուսուցիչները հանգստացան, բարդութիւններ չեն սպասւում։

*Ալէքսանդրապօլ. 11 ժ. 58 ր.*

Գնացքն ուժգին սուլոցով կանգնեց՝ բազմաթիւ ժողովրդի միջից ջոկւեցին քաղաքագլուխն ու Ատրպետը և ներկայացան Կալատուզեանին։ Քաղաքագլուխը ներկայացրեց թղթից շինուած նաւթի վիշկի մի մօդել։

Ատրպետը բացատրեց, որ մօդելը վարպետութեամբ է շինած։ Նրան կարելի է ձևափոխել (ինչպէս երեխաներն ամեն օր խաղում են) նաւակ (երեկ քաղաքային ջրանցքի վերայ բանեցնելու համար) բաղ և փուքս։ Վերջինս շատ նպատակայարմար է քաղաքային վարչութեան մէջ ամբարւած թղթերի վերայից փոշին մաքրելու և երբեմն էլ այդ փոշին քաղաքացիների աչքին փչելու։

Կալատուզեանը բացատրութիւնը լսելուց յետոյ, նստեց վագոն և հրամայեց գնացքը շարժել։

*Կայարան Անի 3 ժ. 15 ր. առ.*

Գասպար ագա Կալատուզեանը ողջամբ հասաւ։ Գագիկ Թագաւորի արձանի կողմից եկած պատգամաւորութիւնը, բաղդ ունեցաւ ներկայանալ և արձանի կողմից խնդրեց այցելել Անին. Կալատուզեանը խոստացաւ մի ուրիշ անգամ, երբ որ այնտեղ խուրմա կը բուսնի։

Ապա Կալատուզեանը յանձնարարեց պատգամաւորութեանը, յայտնել Գագիկ Թագաւորի արձանին, որ Կուկ և Պիրի ճանապարհորդները երկուսն էլ սուտ են խօսում, նրանք չեն եղել Բևեռում, եթէ նրանք հասած լինէին Բևեռին, անշուշտ տեսած կլինէին հայկական դրօշը, որ չորս տարի առաջ Գասպար ագան տնկել է ուղիղ Բևեռի մէջ տեղում, կետրոնի կէտի վերայ և մինչև հիմայ էլ այնտեղ փողփողում է դրօշակն ու երևում հեռատեսներին։

Գնացքի շարժւելու ժամանակ Կալատուզեանը օդային համբոյր փոխանակեց Թագաւորի արձանի հետ, որ Անիի հնադարանից քարացած աչքերով նայում էր իրան չայցելող ճանապարհորդներին։

*Կարխուն առ. 4 ժ. 23 ր.*

Կալատուզեանը մեկնեց ընդառաջ եկած կառքերի հետ Էջմիածին։

*Էջմիածին. 6 ժ. 1 ր.*

Ողջամբ ժամանեց Գասպար ագա Կալատուզեանը։ Դաւառապետն իր տանն էր, Նահանգապետն Երևանում, իսկ զօրքերը զօրանոցներում։ Տէր Տեղակալը Սինօդում կարգադրութիւններ էր անում։

Միաբանութեան ուրախութեանը չափ չկայ։ «Խաթաբալա»-ի մէջ նախշւած վարդապետ-եպիսկոպոսները միահամուռ և միասիրտ, երախտագիտական ուղերձ մատուցին։ Համբարձում Առաքելեանը մի զգացւած քարոզ կարդաց քրդերէն լեզւով։ Կոմիտասը երգեց եգիպտերէն. իսկ Մեսրովբը լաց էր լինում։ Հանդէսը փառաւոր էր։

Գասպար ագան պատասխանեց մի եռացնող քաղաքական մեծ ճառով, որի մէջ մանրամասն բացատրեց, թէ ինչ նշանակութիւն ունի դնդձով ցիճիճ աշնան ժամանակ, մանաւանդ Էջմիածնում։


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

«Գուտտենբերգի» հրատարակութիւնները
(ԴԱՍԱԳՐՔԵՐ)

1. Քերականութիւն մայրենի լեզւի, Ա. Բ. և Գ. մաս. Ստ. Գալստեանի. . . 75 կ.
2. Ընդհան. պատմ, Հին-Դար, Վինոգրադովի, Թարգ. Խաժակի. . . . . . . 1 ռ. —
3. Գծագրութեան օրինակներ Գ. Լևոնեանի Ա. մաս. . . . . . . . . . . . 20 կ.
4. Բ. մաս. . . . . . . . . . . . . . . 20 կ.
5. Գ. մաս. . . . . . . . . . . . . . . 35 կ.
6. Դասագ. ընդհ. աշխարհագր. ա. բնական մաս, կազմեց Լ. Բաբայեան. . . . 60 կ.
բ. մաս. Աւստրալիա, Աֆրիկա, Ամերիկա և Ասիա. . . . . . . . . . . . . . 65 կ.
գ. մաս. Եւրոպա. . . . . . . . . . . . 50 կ.
7. Начальная книжка для арм. школъ, С. Мандиняна. . . . . . . . . . . 55 к.
8. Մեթոդիկա, Ա. Ռուգէի փոխ. Յ. Տէր-Միրաքեանի. . . . . . . . . . . . 1—50 կ.
9. Հայկ. վայելչ. և գեղագր. Գ. Լևոնեանի տետրակ Ա. . . . . . . . . . 40 կ.
10, » » Բ. 40 կ.
11. » » Գ. 40 կ.
12. Ընդհ. աշխ. դասագ., մասն Ա. Թարգ. Ա. Արեղեանի. . . . . . . . . . 60 կ.
13. Սենեօբօս, Համառօտ պատմ. քաղաքակրթութեան. . . . . . . . . . 1 ռ. —
14. ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ, Աղայեանի, Փափազեանի, Ահարոնեանի և Թումանեանի. . . . . . . . . . . . . . . . . . . 2 ռ. —

Գրախանութը գրքերը վերադիր վճարով ուղարկում է նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Գումարով գնողներին մեծ զեղչ։

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ» Г. И. Галустяну.

Գրախանութի գրացուցակն ուղարկւում է ձրի։



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենայն Աշխարհում



ԱՆԳԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԽՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասոնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ




ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

1888

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ



Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ

(Фото-Цинкографія)

ՏԵՂԱՓՈԽՒԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ։



МАГАЗИНЪ

Композиція

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія

шведскаго компо-зиціон. бѣля.

→Носится не менѣе двухъ лѣтъ←

Постоянный большой выборъ свѣжаго товара

**Воротниковъ, манишекъ и манжетъ.**

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА



ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՎԱՐՎ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ

Պատրաստվում են երկսեռ աշակերտները բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Յովհաննեան, Գայիանեան) դպրոցներ ընդունելու։ Աւանդվում են նաև ֆրանսերէն, գերմաներէն. ձեռագործ (կերտուածք, դաղում և կոզմագործութիւն) և մարմնամարզութիւն։ Ընտանիքիս մէջ միայն ապրելու կայ 2 աշակերտի տեղ։ Ընդունելութիւնը սկսված է։

Սօլօլակ, փող. Պասկևիչի, № 13.



ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական, եւ առեւտրա-արդիւնաբերական ան կուսակցական օրաթերթի

Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի օրերը։

Հասցէն՝ Тифлисъ Редакція газеты «Сурандакъ»



Գաւառական քաղաքներում, աւաններում և ընթերցասէր գիւղերում, հարկաւոր են լրագրավաճառ գործակալներ, որոնք յանձն առնեն «ԽԱԹԱԲԱԼԱՆ» տարածել, իրենց շրջաններում»։

Պայմանների մասին դիմել Թիֆլիզ, խմբագրութիւն «Խաթաբալայի»։



Լոյս տեսաւ

Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէսով։

Դասընթացքը ծխ. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։

ԳԻՆՆ է 75 ԿՈՊ.

Գլխաւոր պահեստը «Գուտենբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝—Тифлисъ. Сурпъ-Нишанское училище.

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ՑԵՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ
Համառօտ
ԲԱՌԱՐԱՆ
Русско-Армянскій словарь
(10,000 բառ, 406 էջ)
Գինն է 75 կոպ.
Դիմել՝ Чавчавадзевская ул.,
№ 25-а, 116 Арутюну Туманяну.




Առաջնակարգ համարներ
„ՎԻԿՏՕՐԻԱ“
Գտնւում է Թիֆլիզի կենդրոնում, Դւորցովայա փողոցի վրայ, փոխարքայի պալատի այգուն կից։
Համարները գեղեցիկ կերպով կահաւորւած, նորերս հիմնովին վերանորոգւած և ամեն յարմարութիւններով։ Առաջինը անցնում է էլեկտրաքարշը։
Օրական վարձը 60 կ. մինչև 4 ր.։
Ամսով վարձողներին զիջումն։ Ընտանիքներին առանձնապէս տրւում են ամեն տեսակ յարմարութիւններ։
Ծառայողները վստահելի և քաղաքավարի են։ Սենեակներին կից կան տաք և սառը վաննաներ։ Էլեկտրական լուսաւորութիւն։
Հեռախօս № 1033

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի դասագիրք
Լոյս տեսան
Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.
Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ. 45 կ.
Երկուսն էլ ընդունւած կովկասեան շըրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար։
Տպագրւում են.
Գ. տարի . . . . . 60 կոպ.
Դ. տարի . . . . . 75 կոպ.
Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» և Կենտրոնական, Բագւում՝ Сотрудникъ, Երևանում՝ Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի։

Մի ինտելիգենտ հայ ընտանիք
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
բոլոր միջնակարգ դպրոցների համար, կարող են և պարապել նրանց հետ։
Հասցէն՝ Реутовская № 29
Բնակարան Բէգնազարեանի

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՑ ԳՏՆՒՈՂ
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքաէլեան պր. №24,4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն.
Դասընթացքն աւարտողներին տրւում են ատտեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ պարապմունքները կատարւում են կուրսերում Լօնդօնի Pifman. և Պարիզի Pigi r դպրոցների ձևով կազմակերպւած Must r. (Comtoir-ում։ Նիւթերն առնւում են ռէալ կեանքից. Առարկաններն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ. գերմ. ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրայ, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ, 2) ոճագրութիւն, 3) դակտիլօգրաֆիա (ըսմինգտօն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարւում են և զատ զատ։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—5 և կէս. ժ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկւում և տրւում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. սեպտեմբերի 15-ից պարապմունքներ։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ
(Պուշկինեան փող. տուն Սունդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)
Ամէն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ
ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԹ
Ունինք մեծ քանակութեամբ թարթի գօշ. Դօնի և տեղական բալիկ, ճիպա, ցալձվալա, եանի և այլ
ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԱՐ
Կովկասեան և արտասահմանեան ձկնային կոնսերւներ
Գները ամենաչափաւոր

Ծխախոտի գործարանից՝



Ն. Ի.
ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.
Ի վաճառ է հանւած
ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍ
«ТОВАРИЩЪ» 20 հատը 5 կոպ. (միջակ ձևի)
«ДРУЖБА» 20 հատը 5 կոպ. (բարակ ձևի)
Դիտողութիւն.
Առևտրական տունը վճռեց ի վաճառ հանել այդ պապիրոսները ամենահասարակ էտիկէտներով, որպէսզի այդ կերպով հնարաւորութիւն լինի պ. պ. ծխողներին միշտ էլ լաւ յատկութեան և սիրուժելի համով ծխախոտ ընձեռել։
Ամեն տեղ էլ կարելի է պահանջել
Մեծ քանակութեամբ տւած պատւէրները կը կատարւին ըստ չափու հնարաւորութեան։

## ԽՄԲԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ




*Օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներում... երբ գրպանում մկները չիրիթ են անում*

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԿՐՕՆԻ ԴԱՍՏՈՒՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ



*—Բա որ էգպէս լաւ հայերէն գիտէք, էլ ինչու հայ ծխական, կամ թեմական դպրոցներում տեղ չէք ստանում։*

*—Ջէն տալի աղա ջան, էգ մէկ, մէկ էլ էն որ, հայոց դպրոցներում ոչ պէնսիայ կայ ոչ մէնսիայ. սաւայ ուրան անգործ էլ ենք. գործ է ոչ հայերէն գիտենք և ոչ կրօն. համա խնդրում ենք, մեր ողլուշաղի խաթրը պահէք, մեզ իրաւունք տաք վարժապետութեան։*

# ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՍՏԸ



Գանձարանը կողոպտում են,
Եւ մարդիկ են կոտորում.
Երբ ուզում են շուտ փախչում են
Եւ օրէնքից ազատւում։

Մզկիթում կամ դեսպանատան
Հանդիսաւոր բաստ նստում.
Եւ կերածը և սպանածը
Լաւ լաւաշին՝ հեշտ մարսում։